

4. Գրեգոր Բ. Եղբայր Յովհաննու արքեպիսկոպոս 1409ին (Կամենից էջ է) գոյութիւն չունի:

5. Աւետիք երրորդ արքեպիսկոպոսն է Լիովի աթոռին վրայ: Հ. Ալիշան անոր առաջին տարին կը նշանակէ 1415²⁵: Պատմական յիշատակարաններու մէջ ան կը յիշուի 1445ին եւ 1459ին (Կամենից, էջ 116, 134): Եթէ հաւանականութիւն կայ, թէ Աւետիք ձեռնադրուած է 1415ին, այս թուականը կարելի է համարել միաժամանակ Յովհաննու մահուան տարին:

6. Անճիւղ եւ ինչ որ կը գրէ Յովհաննէս արքեպիսկոպոսի մասին Մկրտիչ Եպ. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի. Երուսաղէմ 1929, էջ 353:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

ՄԵՆՈՒՆՆ ԿՈՒՆՉՔԸ ՀՅՈՒՄՆԵՐԵՆԵՐ ԵՍՊԵՐԷՋԻ ՎՐԱՅ

† ՌԻՍՈՒՅՉԱԳԵՑ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑ (23 ՅՈՒՆՈՒՆԻ 1875 — 27 ՅՈՒՆՈՒՆԻ 1942)

Հայ-բիւզանդական Պատմութեան ներհուն մասնագէտ Ն. Աղոնց ծնած է 23 Յունուար 1875ին Չանգեղուզի Բոնակոթ գիւղը: Իր երկրորդական ուսման ընթացքը կատարած է Էջմիածնի Գէորգեան ձեմարանը, ապա Տիգրիս անցնելով յաճախած է ուսանական վարժարան: 1895ին կը փոխադրուի Պետերբուրգ հետեւելու տեղւոյն Համալսարանի Պատմութեան եւ Բանասիրութեան, ինչպէս նաեւ Արեւելագիտութեան ճիւղերուն: Հոն ունկնդրեց մասնաւորապէս Նիկողայոս Մառի դասախօսութիւններուն: Իր համալսարանական ընթացքի աւարտածան եղաւ՝ «Յայտնուրքը եւ Տօնականները»: Ն. Աղոնց հետապնդեց այնուհետեւ ձեռք բերել աթոռ մը Պետերբուրգի Համալսարանին մէջ: Կարելոր ձեռագիրներ ու-

²⁵ Թէպէտ Հ. Ալիշան ըստ օգիտութեան չի յիշեր աղբիւրը, բայց նա այս թուականը առած ըլլալու է Գ. Դանի «Արեւելեան Հայքի Բուսկովին» գործէն, որը թարգմանած է Հ. Գ. Գալսեմբարեան, Վիեննա 1891, էջ 6. կը գրէ. «Աւետիք անուամբ Եպիսկոպոս մը Պոզորսկի-Կամենեցի եւ Մոզակայ Հայոց կ'առաջնորդէր 1415—1445»: Հոս Գ. Դանի աղբիւրն է Sadok Baracz, Żywoty sławnych Ormian w Polsce, Lwów, 1856, էջ 55. Հիմա նաեւ նոյն հեղինակի Rys dziejów Ormiańskich, Tarnopol, 1869, էջ 107—108:

սովհաստիւրելու եւ աւելի հմտանալու դիտումով կը ճամբորդէ Բերլին, Միւնխեն, Վիեննա, Պարիս, Լոնտոն եւ Վենետիկ: Այս նպատակաւ կ'ուղեւորի 1903—1904 նաեւ Տիգրիս եւ Էջմիածին: Իր ուսուցչութեան քննաճառը՝ «Հայաստան Յուստինիանոսի դարուն», որ իր գլուխ գործոցն պիտի ըլլար, լոյս տեսաւ 1908ին Ն. Մառի «Բնագիրքը եւ Ուսումնասիրութիւնք» շարքին մէջ: Քանի մը տարի յետոյ կը պատրաստէ Դոկտորութեան քննաճառը՝ «Դիոնիսիոս Թրակացոյն Բերականութեան հայերէն թարգմանութիւնն եւ անոր Մեկնիչները»: Այս աշխատասիրութիւնն եւս դնահատուեցաւ քննիչ Յանձնախումբէն, եւ Ն. Աղոնց կոչուեցաւ պաշտօնապէս դասախօսելու Համալսարանի մէջ:

1917ին երբ ուսական յողթական բանտը գրաւեց Վասպուրական, Ուսուցչապետ Ն. Աղոնց նախագահ կարգուեցաւ այն գիտական աջաւանքին, որ պիտի հետադատէր Վանի շրջակայքը: 20ական թուականներուն Լոնդոն կը գտնենք զինքը, հոս կ'աշխատի հայերէնագէտ Փ. Կոնրէրի հետ: Անկէ կ'երթայ Պարիս, ուր կը մնայ երկարադէպ ժամանակ մը իր նախաժողով ուսումնասիրութիւններով պարապելու: Այս տարիներուն կը տեսնենք իր գրչէն յօդուածներ «Հանդէս Ամսօրեայ», «Հայրենիք», «Բազմալէպ» եւ օտար պարբերականներէ զասախօսելու Հայ լեզուն Համալսարանի Արեւելեան Հաստատութեան մէջ: Տասնեակ մը տարի պիտի գործէր այստեղ ի պատիւ Հայ անուան, Հայագիտութեան բարգաւաճումի եւ հայ-բիւզանդական յարբերութիւններուն հայոց ուսումնասիրութեանց նուիրուած: Աշխատակցեցաւ եւանդիլ՝ Byzantion եւ Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire orientales et slaves պարբերականներուն: Իր գլուխ գործոցն կոչուած էր ըլլալու «Հայոց Պատմութիւնք», որ ձեռնարկած էր յօրինել իր կեանքին վերջին տարիներուն: Վաղահաս մահը չթողարտեց զուրի հանել զայն: Իր մահէն վերջ՝ 1946ին, լոյս տեսաւ Հայոց Պատմութեան նախնական շրջանը շուրջիոյ բաժինը:

Ն. Աղոնց շնորհիւ իր արեւելեան եւ արեւմտեան հին եւ նոր լեզուներու քաջ ծանօթութեան, եւ հայ ու բիւզանդական աղբիւրներու մանրակրկիտ քննութիւններուն, յաջողեցաւ լուսարանել կարգ մը

լինդիւրներ, որոնք օտարազգի բիւզանդագէտներու դժուար պիտի ըլլային: Իրեն համար մութ անկիւն չկար: Հայրենասէր էր Ուս. Աղոնց. իր այս սէրը կը յայտնուէր նաեւ իր ուսումնասիրութիւններու ընթացքին: Ան կը թելադրէր իրեն կնճոռոտ հարցերու մեկնութիւններ եւ խիղախ լուծումներ, որոնք սակայն միշտ չէին կրնար հաւանութիւն գտնել լուրջ բիւզանդագէտներու քով, ինչպէս եւ չգտան: Նոյնը կարելի է ըսել համեստ չափով հայ բանասիրութեան հայոց որոշ աշխատութիւններու նկատմամբ:

Պրոֆ. Ն. Աղոնց անուանի Հանդիսացաւ իրբեւ բանասէր եւ պատմագէտ, այլ եւ երեւցաւ իրբեւ հրատարակազէր եւ գրագէտ: 1903—1904 իր խմբագրութեամբ լոյս տեսաւ «Բանբեր գրականութեան եւ արուեստի» հանդէսը: Գրեց հրատարակազրական յօդուածներ զանազան պարբերազրներու եւ օրաթերթերու մէջ:

Այստեղ պիտի փորձենք կազմել Ն. Աղոնցի հայագիտական մեծ եւ փոքր աշխատասիրութիւններու ամբողջական ցուցակ մը: Հետեւեալ համառօտագրութիւնները պիտի գործածենք.

- Հանդէս՝ Հանդէս Ամսօրեայ, Վիեննա: ԲՁՄ՝ Բազմալէպ, Վենետիկ: Հայրենիք՝ Հայրենիք ամսազէր, Բոստոն: ROC: Revue de l'Orient Chrétien, Paris. REA: Revue des Études Arméniennes, Paris. BYZ: Byzantion, Bruxelles. Annuaire: Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves, Bruxelles.

- 1. Մի տողանարար Եօթնդեպից: Հանդէս 9 (1895) 33—36: Ն. Մառի՝ Թարգմանարար: 2. Կասիա միանձնուհի եւ Հայերը: Հանդէս 15 (1901) 129—132: 3. „Начальная история Арменія“ у Себеоса въ ея отношеніяхъ къ трудамъ Моисея Хоренскаго и Фауста Вивантийскаго. (Հայոց նախնական պատմութիւնը Սերէոսի քով եւ անոր աղբիւրը Մովսէս Խորենացոյ եւ Փաւստոս Բիւզանդացոյի հետ) Византийскій Временникъ. 8 (1901) 64—105. (Արտատպուած՝ Պետերբուրգ, 1901, 8⁰ մեծ, էջ 42):

4. Марзбанъ Васакъ передъ судомъ историковъ (Վասակ Մարզպան պատմագիրներու դատատանին առջ): Записки восточн. отд. имп. русск. археолог. общ. 15 (1904) 0122—30:

5. Գրախօսական Գ. Խալաթեանի «Հայ Արշակունիքի Մ. Խորենացոյ Պատմութեան մէջ» գործին (նուս.) Записки. 16 (1904) 0145—61:

6. Армения и Грузія: Виз. Врем., 11 (1904) 316—352.

Մատենագիտական տեղեկութիւններ՝ Ի. Զաւարովի աշխատակցութեամբ:

7. Գրական նշմարներ: — Լեզուական, ուղղադրական: — Բանբեր 2 (1904) 129—154:

8. Армения въ эпоху Юстиніана (Հայաստան Յուստինիանոսի դարուն): Պետերբուրգ 1908 8⁰, XIV, էջ 526. (Тексты и разысканія по армяно-грузинской филол. кн. XI).

Կու տայ Ա. Բ. Գ. Եւ Գ. Հայրի սահմաններու եւ հայ նախարարներու ծագման մասին մանրակրկիտ ուսումնասիրութիւն. ապա կը ծանրանայ Յուստինիանոսի «բարենորոգութիւններու» վրայ: Գրքին երկրորդ մասին մէջ կը խօսի Պարսկահայաստանի վրայ:

9. О происхожденіи Армянъ-Цатовъ (Հայ-Մաթերու ծագման մասին): Журналъ министерства народнаго просвѣщенія, 32 (1911) 238—249.

1. Լիսիցեան թարգմանած է այս գրութիւնը հայերէնի. Հանդէս 26 (1912) 256—271:

10. Տորք աստուած հին Հայոց: Յուշարձան, Վիեննա 1911, 389—394:

11. Амелій, епископъ херсонскій (Ամպելիս Եպիսկոպոս Բերսոնի): Христианскій Востокъ 2 (1913) 175—186:

12. Діонисій Өракійскій и армянскіе толкователи (Արուեստ Դիոնիսոսի Բերականի եւ Հայ մեկնութիւնը նորին): Պետերբուրգ 1915 8⁰, էջ Խ + 307: [Bibliotheca Armeno-Georgica, IV].

13. Հայաստան. իր պատմութիւնն եւ գրականութիւնը (նուս.): Ե Ֆրոն-Բրոսք հասարակական հայագիտարանի մէջ:

14. Towards the solution of the Armenian Question London 1920, 16⁰, էջ 95. (The Armenian question at Sévres. Historical bases of the Armenian question and the fall of Turkey. The dismemberment of Turkey. — Հրտ. The Armenian Inf. Bureau.)

15. Фаустъ Византийскій, какъ историкъ. (Փաւստոս Բիւզանդացի որպէս պատմագիր): Христианскій Востокъ 6 (1922) 235—72 (շարունակութիւնը լոյս չէ տեսած):

16. Kurdish intrusion into Armenia. The New Armenia 14 (1922) 4—6.

17. Note sur les synaxaires arméniens, ROC 24 (1924) 211—218.

18. Անճանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների: Հանդէս 39 (1925) 193—202, 321—328, 435—441, 531—539: Արտատպուած՝ «Մաշտոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների» (Աղղ. Մատենագրան ձժԱ). Վիեննա 1925 8⁰ էջ 56:

19. Le questionnaire de S. Grégoire l'Illuminateur. ROC 25 (1925—1926) 309—357.

20. Բնական նշմարներ եղնիկի մասին (Լ. Մարիէտի աշխատութեան աթիւ): ԲՁՄ. 82 (1925) 196—200, 294—298, 366—371, 83 (1926) 69—72, 108—113:

21. Հին Հայոց աշխարհագրագրեր: Հայրենիք 4 (1926) թ. 12, 37-45, 5 (1926) թ. 1, 78-88, թ. 2, 70-82, 5 (1927) թ. 3, 109-121:

22. Կորիւնի մասին: (Պ. Ֆնտզեանի նկատողութիւնները առթիւ): Հայրենիք 41 (1927) 273-284, 395-405:

23. Դարձեալ Կորիւնի շուրջ: Հայրենիք 42 (1928) 76-94: Ֆնտզեանի պատասխանին առթիւ. տե՛ս Հայրենիք 41 (1927), 529-541:

24. Tarku chez les anciens Arméniens. REA 7 (1927) 189-194.

25. Les fêtes et les saints de l'Eglise Arménienne. ROC 26 (1927-1928) 74-104; 225-278, շարունակութիւնը ընդհատած:

26. Հին Հայոց շինականութիւնը: Հայրենիք 5 (1927) թ. 12, 81-85 6 (1927) թ. 1, 147-154, թ. 2, 94-100:

27. Sur l'origine de Léon V, Empereur de Byzance. Armeniaca 2 (1927) 1-10.

28. Բաղաբառական հոսանքները հին Հայաստանում: Հայրենիք 5 (1927) թ. 4, 68-77, թ. 5, 84-96:

29. Հայաստանի ոսկեհաճը: Հայրենիք 6 (1928) թ. 3, 86-95:

30. Գրեզոր Պարթևի հարցարանը եւ նշանակ: Հայրենիք 6 (1928) թ. 7, 72-81:

31. Գրեզոր Լուսաւորիչ եւ Անակ Պարթև: Հայրենիք 6 (1928) թ. 9, 73-80:

32. Grégoire l'Illuminateur et Anak le Parthe. REA 8 (1928) 233-245.

Ազգամանապէս պատմական մասը պարսիկ դիւցազնական-միջպատանական գլխավորութեան ազդեցութեան ենթակայ եղած է. հոն պատմուած դէպքերը իրականութեան բոլորովին չեն համաձայնիր:

33. Բաղրատունեաց փառք: Հայրենիք 7 (1928), թ. 1, 61-70. թ. 2, 47-55. 7 (1929), թ. 3, 78-89. թ. 4, 60-69. թ. 5, 147-156. թ. 6, 79-88:

34. Արտաւան Արշակունի: Հայրենիք 7 (1929), թ. 11, 96-109:

35. Politicals Currents in Old Armenia. Massis 2 (1929) Nov.-Dec.

36. Les fonds historiques de l'épopée byzantine Digénis Akritas. Byzantinische Zeitschrift 29 (1929-1930) 198-227.

37. Մամիկոնեան իշխանութեան բնութագրական գաճի վրայ: Հայրենիք 8 (1930), թ. 5, 71-79. թ. 6, 105-116. թ. 7, 81-90. թ. 8, 96-105. թ. 10, 92-108:

38. Վարդ Մամիկոնեան, Հայրենիք 8 (1930) թ. 11, 98-105. թ. 12, 57-68:

39. Հայերը բնութագրական գիտութեանց մէջ: Հայրենիք 9 (1930), թ. 2, 93-105. 9 (1931), թ. 3, 88-96:

40. Պէշիկթաշեան եւ կցորդ խնդիրներ: Հայրենիք 9 (1931), թ. 6, 79-94:

41. Վասիլ Հայկազն: Հայրենիք 9 (1931), թ. 8, 87-98. թ. 9, 135-141. թ. 10, 110-106. թ. 11, 120-126:

42. Խաչատուր Արուսեանի վախճանը: Վէճ Ա. (1933) 5-13:

43. Ղեկունը եւ Խորենացի, քննութիւն Հ. Ն. Ալիկեանի տեսութեան: Հայրենիք 11 (1933), թ. 8, 79-90, թ. 9, 120-126:

44. Nicéphore au col roide. BYZ 8 (1933) 203-212.

45. L'âge et l'origine de Basile I. BYZ 8 (1933) 475-500; 9 (1934) 223-260.

Վասիլ Ա. հայ էր ծագումով:

46. La portée historique de l'oraison funèbre de Basile I par son fils Léon VI le Sage. BYZ 8 (1933) 501-513.

47. Տեղեկագիր՝ «Պատմութիւն Հայերէն Լեզուի» գործին: Սիոն 8 (1934) 382-385:

Հ. Աճառեանի ծանօթ մատենանը կը գրախօսէ:

48/49. Notes arméno-byzantines. BYZ 9 (1934) 367-382; 10 (1935) 161-205. Ունի հետևեալ կէտերը. 1. Les sceaux des Makhitar (p. 367-370). 2. La lettre de Tzimisces au roi Ashot (p. 371-377). 3. La famille de Philarète (p. 377-382). 4. La famille de Theodorakan (BYZ 10, p. 161-170). 5. Les Dalassènes (p. 171-185). 6. L'aïeul des Roubénies (p. 185-203). Հմմտ. Հայրենիք 50 (1936) 269-276:

50. Les légendes de Maurice et de Constantine V. Annuaire 2 (1934) 1-12.

51. Les Taronites en Arménie et à Byzance. BYZ 9 (1934) 715-738; 10 (1935) 531-551; 11 (1936) 21-42.

52. Ashot Erkat. Annuaire 3 (1935) 13-35.

Աշոտ ըստ Յովհ կաթողիկոսի: Աշոտ Երկաթ 914ին Բիւզանդիոնի կայսեր սյցիլութեան կ'երթայ, անոր համար կը յիշուի յոյն մատենագիրներէն:

53. «Նոր Հայերէն Բերականութիւնը», Վէճ 4 (1936) 46-51:

Գրախօսական Դկտ. Արտ. Արեղեանի „Neuar-menische Grammatik, 1936“ գրքին:

54. Sur la date de l'histoire de Moïse de Khorene. BYZ 11 (1936) 97-100.

Արթուր H. Lewy: The date and purpose of Moses of Chorene's history, անդ, 81-96, յորումին. — Նոյնը հայերէն թարգմանութեամբ Սիոն 10 (1936) 335-336:

55. A propos de la note de M. Lewy sur Moïse de Khorene. BYZ 11 (1936) 597-599.

Նոյնը հայ. թարգմանութեամբ Սիոն 11 (1937) 224-225:

56. Փղոսկրեաց Աւետարանի արուեստը: Սիոն 8 (1936) 273-274:

Sirarpie der Nersesian: The date of the initial miniatures of the Etchmiadzin Gospel, Chikago 1933 գրքին առթիւ:

57. Մլէխ աւետարանի գրութեան տարին: Սիոն 10 (1936) 274-275:

Մլէխ աւետարանի «Ն.Զ. Թերթ — ԹՄԱ Թ. — Արաց ԻԼ Բ — Արեզ 2 Ե» գրութեան յիշատակարանին մէջ գտնուող Բ. և Ե. իբրևացիօրէն օր նշանակող գրիեր կ'ընդունի եւ կ'առաջարկէ փոխել ԹՄԱ.Ը՝ ԹԺԱ.Ի: Հ. Հայրենիք (ԲՉՄ 96 [1939] 109-112) կը փորձէ «Սիոն»ի մէջ եղած հիմնական հաշիւները խախ-

տել եւ սրբազրել, բայց չի յաջողիր: Հմմտ. Հայրենիք 53 (1943) 23-38 «Մլէխ աւետարանը 620 = 932ին գրուած»:

58. Փոքր Սոկրատի հեղինակը: Սիոն 10 (1936) 300-304:

Մեծ Սոկրատը «Թարգմանուած է Պոլսում 696 թուին փրկոնի ձեռքով, Փոքրը խմբագրուած է Մեծից՝ Յակոբ Ուռհայեցու աշխատութեամբ ԺԲ. դարում»:

59. Quelques noms de personnages byzantins dans une pièce du poète arabe Abû Firâs (en collaboration avec M. Canard). BYZ 11 (1936) 451-460.

60. L'archevêque Théophylacte et le Taronite. BYZ 11 (1936) 577-588.

61. Les vestiges d'un ancien culte en Arménie. Annuaire 4 (1936) 501-515.

62. Quelques étymologies arméniennes. Annuaire 5 (1937) 5-12.

63. Դասիթ Բէկ եւ Տէր Աւետիքի սերունդը: Հայրենիք 15 (1937) թ. 2, 66-72:

64. L'aspect iranien du servage. Recueil de la Societé J. Bodin. Brux. 1937.

65. Նշանագիր կարգաց բանից Եզնկայ Երեցու: Սիոն, 12 (1938) 147-153, 180-185:

Այս հրատարակած է նախ Հ. Ն. Ալիկեան (Հայրենիք, 51 [1937] 517-532): Արդոնք քննութեան կ'անցնէ նոս նաեւ Հ. Ալիկեանի նկատողութիւնները, որոնց կ'անդրադառնայ Ալիկեան Երկրորդ յօդուածով մը՝ «Դարձեալ Նկարագիր (Նշանագիր) կարգաց Ի բանից Եզնկան Երեցու». տե՛ս Հայրենիք, 52 (1938) 238-259: Վերջին անդրադարձութիւններուն կը վերադառնայ Ն. Արդոնց յաջորդով՝

66. Հ. Ն. Ալիկեանի պատասխանին պատասխան: Սիոն 12 (1938) 330-337, 381-383, 13 (1939) 10-15:

67. Tornik le Moine. BYZ 13 (1938) 143-164.

68. Aux confins militaires de l'Orient byzantin. BYZ 13 (1938) 282.

69. Emprunts de haute époque en arménien. Revue des Études indo-européennes 1 (1938) 457-467.

70. Samuel l'Arménien, roi des Bulgares: Mémoires de l'Acad. royale de Belgique, Classe des Lettres, XXXIX. Armonoy. Bruxelles 1938 8°, էջ 63:

Լաւազոյն գործերէն է, թէեւ մասնագէտներէ շատ քննադատուած: Եզրակացութիւնն է. Բուլղարներու պետութիւնը բնութագրական տիրապետութեան դէմ դիւցազնորէն պաշտպանող՝ Սամուէլ Կորնոօ-սուլոս (997-1040) հայ էր: Կը ծանրանայ մանաւանդ Բուլղարներու Երկրորդ պետութեան պատմութեան վրայ: Բ. հատուածին մէջ կը խօսի Սամուէլի ծագումի մասին հետեւելով Ասողիկի եւ Եր զատը կը պաշտպանէ հնարաւոր ստարկութիւններու դէմ: (Տե՛ս Հ. Վ. Ինչլիգեան) Ի գրախօսականը Հայրենիք 54 [1940] 250-251:

71. Notes sur le Livre des Cérémonies. BYZ 14 (1939) 387-406.

72. Observations sur la généalogie des Taronites. BYZ 14 (1939) 407-413.

Պատասխան մըն է V. Laurent: Alliances et filiation des premiers Taronites, princes arméniens médiatisés. Ech. d'Or. 37 (1938) 127-135 գրուածքին առթիւ:

73. Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու: Անահիտ 10 (1939), թ. 3, 69-77 (շարունակութիւնը ըստ էջ տեսած):

74. Biblia armeană și insemnăitatea sa istorică. (Հայերէն Աստուածաշունչը եւ անոր պատմական նշանակութիւնը): An i (Bucureşti 1941) 90-100 (տուժուներէն):

Ս. Գրքի հայերէն թարգմանութեան 1500ամեակի առթիւ խօսուած դասախօսութիւն մըն է:

75. Histoire d'Arménie. Les origines — du Xe siècle au VIe (Av. J. C.). Paris 1946 8°, էջ XV + 445.

Հ. Ա. Ա.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
(Ուղարկուած Խմբագրութեան):

Հայ Տոհմանուններ: (Պատմական հետազոտութիւն) Աշխատասիրչուներ՝ Պրոֆ. Հ. Աճառեան, Պրոֆ. Ա. Խաչատրեան, Պրոֆ. Կ. Բաժամջեան, Գ. Մանուկեան, Ս. Շամլեան, Թ. Ազատեան [Հրտ. Մշակոյթ գրատան] Իսթանպուլ, տպ. Ալթինարեան [1937], 80, էջ 96: Գինն՝ 100 դրուչ:

Հայրենիք Օրացոյց 1946 եւ 1947: Պոսթին: Հիւսայեան Յակոբ, Անմահ տիպարներ (Պատկերներ եւ յիշատակներ Ուրֆայէն): Փարիզ, տպ. Արաքս, 1945, 80, էջ 112:

— Դիւցազնական հայորդին Մկրտիչ Եօթնկարեան: Աթէնք, տպ. Ատրու-

ան, 1937, 80, էջ 127: Գինն կէս տոլ.: Issayan, 38 Rue du Ménil, Asnières (S.) France.

— Զոյգ մը Հէքեաթ. Ա. Հէքեաթ Երեք Իմաստութեան, Բ. Թորոզմ Արքայից Արքայ: Փարիզ, տպ. Արաքս, [տարի], 80, էջ 276: Գինն՝ 120 Փր.:

Հունդարական պարտէզը: Զուարթ պատմուածքներ Ֆէրէնց Մորնար, Ֆրէտէրիք Քարինթի, Լատիւլաուս Լաքաթոչ եւ Մարկիթ Քաֆթա Հունդարացի հեղինակներէն: Թրքմ. Պալլըճեան Սահակ: Գահրէթ, տպ. Նեղոս, 1941, 80, էջ 64: Գինն՝ 25 սէնթ: